ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԼԻԱՆԱ ՍԱՇԻԿԻ ՕՀԱՆՅԱՆ

ԴԱՍԱՎԱՆԴՈՂՆԵՐԻ ԵՎ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՓՈԽԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ

ԺԳ.00.01-«Մանկավարժության տեսություն և պատմություն» մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

Ս Ե Ղ Մ Ա Գ Ի Ր

ԵՐԵՎԱՆ-2015

Ատենախոսության թեման հաստատվել է Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում:

Գիտական ղեկավար՝ մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ՝ **Մ. Ս. Վարդանյան**

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր՝ **Ի. Կ. Կարապետյան**
մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ՝ **Ա. Ա. Աշիկյան**

Առաջատար կազմակերպություն՝ **Վանաձորի Հովհ. Թումանյանի անվան պետական համալսարան**

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2015 թ. նոյեմբերի 20-ին, ժամը 14^{00}-ին Երևանի պետական համալսարանում գործող ՀՀ ԲՈՀ-ի մանկավարժության 065 մասնագիտական խորհրդում:

Հասցեն՝ 0025, ք. Երևան, Աբովյան 52^{ա}, ԵՊՀ-ի հայ բանասիրության ֆակուլտետի մասնաշենք, թիվ 203 լսարան:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ԵՊՀ-ի գիտական գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2015 թ. հոկտեմբերի 20-ին:

Մանկավարժության 065 մասնագիտական
խորհրդի գիտական քարտուղար՝
մանկավարժական գիտ.թեկնածու, դոցենտ՝ **Ա. Փ. Ղազարյան**

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Հետազոտության արդիականությունը: Բարձրագույն մանկավարժական կրթության համակարգում դասավանդողների և ուսանողների արդյունավետ փոխգործակցության գործընթացն իրականանում է ընդհանուր նպատակների, հետաքրքրությունների, կենսադիրքորոշումների, դրդապատճառների, անհատական փորձի մշտական փոխանցման ընթացքում, որն ուսումնադաստիարակչական գործընթացում ենթադրում է փոխգործակցության ձևերի որակական փոփոխություններ:

Ուսումնական գործընթացում դասավանդող-ուսանող փոխգործակցության արդյունավետությունը պայմանավորված է մի շարք ուսումնական և արտաուսումնական գործոններով: Շատ դեպքերում այդ գործոնները դժվար է տարազատել, քանի որ այստեղ խոսք է գնում ուսուցման և ուսումնառության նպատակների, ուսումնական պայմաններում հաղորդակցվող կողմերի գործունեության, դրդապատճառների, հետաքրքրությունների, պահանջմունքների, ինչպես նաև սոցիալական տարբեր խմբեր, խավեր ներկայացնող, տարբեր տարիք, կարգավիճակ ունեցող մարդկանց մասին:

Խնդիր է դրվում կոլեկտիվ ուսուցման պայմաններում զարգացնել սովորողների ինքնուրույնությունը, ապահովել նրանց ակտիվությունը, ընտրել ուսուցման օպտիմալ մեթոդներ, համադրել ուսուցման և դաստիարակության ավանդական և նորարարական տեխնոլոգիաները: Հետազոտության թեմայի արդիականությունը պայմանավորված է բարձրագույն մասնագիտական կրթության զարգացման ժամանակակից միտումներով, հասարակության կողմից անձի հաղորդակցման որակներին ներկայացվող արդի պահանջներով, միջմշակութային երկխոսությանը նպաստող արդի գործընթացների վերլուծության և կրթության կազմակերպման նոր ռազմավարության մշակման անհրաժեշտությամբ:

Համապատասխան գրականության վերլուծության, ինչպես նաև ՀՀ-ի մանկավարժական բուհերում իրականացված հարցումները, մշտադիտարկումը ցույց են տալիս, որ դասավանդող դասախոսների և ուսանողների փոխհարաբերությունները տակավին ավանդական բնույթ ունեն: Մանկավարժական աջակցման, փոխգործակցման սկզբունքները, տեխնոլոգիաները ուսուցման գործընթացի կազմակերպման տարբեր փուլերում հիմնականում չեն

կիրառվում: Ոչ բոլոր դասավանդող մանկավարժներն են գիտակցում այն հակասությունները, որոնք առաջ են գալիս դասավանդողների և ուսանողների՝ հաղորդակցման, մասնավորապես՝ փոխգործակցության ընթացքում, երբ ուսուցման գործընթացի շարունակական կանոնակարգումը հանգեցնում է դասավանդող դասախոսների և ուսանողների ինքնուրույնության աստիճանական կորստի, ստեղծագործական, քննադատական մտածողության զարգացման մանկավարժական պայմանների վատթարացմանը:

Խնդրո առարկա հիմնախնդրի տարբեր հայեցակետեր ներկայացվել են հայրենական և արտերկրի հետազոտողների կողմից: Մանկավարժական բուհում սուբյեկտների փոխհարաբերությունների տեսանկյունից կրթական գործընթացի օրինաչափությունները ուսումնասիրել և բացահայտել են Վ. Ի. Անդրեևը, Գ.Մ. Անդրեևան, Վ.Պ. Բեսպալկոն, Վ.Ի. Դոբրինինան, Յու. Գ. Ֆոկինը: Օ.Վ. Դոլժենկոն, Ա.Ն. Լեոնտևը, Ն.Ն. Մոիսեևը, Ս.Լ. Ֆրանկլը դիտարկել են մանկավարժական հաղորդակցման արժեքային կողմնորոշիչները:

Ապագա ուսուցիչների մասնագիտական պատրաստության ընդհանուր տեսական դրույթները մշակվել են Ի.Ս. Բոլոտինի, Է.Ն. Գուսինսկու, Ս.Վ. Կուլնևիչի, Լ.Վ. Պոպովի, Ա.Ա. Օրլովի կողմից:

Հետազոտության առարկան ձևակերպելու, նորույթը հիմնավորելու տեսանկյունից կարևորվում են դասավանդող-ուսանող փոխգործակցության տարբեր հարցերին նվիրված ատենախոսությունները: Մանկավարժական փոխազդեցության, փոխգործակցության կազմակերպման տարբերակցված մոտեցման կիրառման հիմնախնդիրն է քննության առարկա դարձրել Լ.Վ. Բազարովան, Ա. Ի. Բուլիգինան, Յու. Վ. Բուլինան, Ի. Վ. Գուժվան, Ա. Մ. Եսենգալիևը, Ս. Ն. Եֆրեմովան, Օ.Յու. Լեբեդևան, Օ.Վ. Իվանովան, Ա. Ֆ. Կաբիրովը, Օ. Ն. Կնյազևան, Մ. Վ. Լոմաևան:

Համապատասխան վերլուծությունը ցույց է տալիս, որ տակավին խորությամբ հետազոտված չեն մանկավարժական բուհի կրթական գործընթացում դասավանդողների և ուսանողների միջև արդյունավետ փոխգործակցության ձևավորման մանկավարժահոգեբանական առանձնահատկությունները, հաշվի առնելով մանկավարժական փոխգործակցության մասնակիցների ազգային պատկանելությունը, մտածելակերպի յուրահատկությունները, տվյալ բուհում ձևավորված ավանդույթները և սովորությունները, ինչպես նաև

մանկավարժական և հոգեբանական աջակցման կամ ֆասիլիտացիայի, մենթորային տեխնոլոգիայի կիրառման հնարավորությունները ՀՀ-ի ժամանակակից բուհական, մասնավորապես մանկավարժական կրթության համակարգում:

Հետազոտվող հիմնախնդրի սոցիալ-մանկավարժական, գործնական նշանակությունը և տեսական ոչ բավարար մշակվածությունը կանխորոշեցին հետազոտության թեմայի ընտրությունը՝ **«Դասավանդողների և ուսանողների փոխգործակցության կատարելագործման հիմնախնդիրը»:**

Հետազոտության նպատակն է տեսականորեն հիմնավորել և գործնականում ներդնել մանկավարժական բուհում դասավանդողների և ուսանողների փոխգործակցության կատարելագործման մանկավարժական աջակցման նոր մոդել:

Հետազոտության օբյեկտը դասավանդողների և ուսանողների փոխգործակցության գործընթացն է:

Հետազոտության առարկան ապագա ուսուցիչների մասնագիտական պատրաստության գործընթացում դասավանդողների և ուսանողների փոխգործակցության կատարելագործման մանկավարժական աջակցման նոր մոդելն է:

Հետազոտության վարկածը. Կրթական բարեփոխումների արդի փուլում մանկավարժական բուհում դասավանդողների և ուսանողների փոխգործակցությունն արդյունավետ կիրականանա, եթե՝

- վերլուծվի դասավանդող-ուսանող փոխգործակցության էությունը, բնութագրվեն այդ գործընթացում մանկավարժական հաղորդակցման դերը և դասավանդողի հոգեբանամանկավարժական ներգործության առանձնահատկությունները,
- հետազոտվեն և բացահայտվեն բարձրագույն կրթության արդի բարեփոխումների համատեքստում դասավանդողների և ուսանողների փոխգործակցության առանձնահատկությունները, դասավանդողների գործառույթներն ու մասնագիտական գործունեության բովանդակային բաղադրիչներն ըստ ուսանողների հետ փոխներգործության,
- նախագծվի և գործնականում ներդրվի բարձրագույն մասնագիտական կրթության համակարգում դասավանդող-ուսանող փոխներգործության

արդյունավետ իրականացման մանկավարժական աջակցման նոր մոդել,

- մշակվի և գործնականում ներդրվի «Մանկավարժի մասնագիտության հիմունքներ» հատուկ դասընթաց՝ հիմնված դասավանդող-ուսանող ակտիվ հաղորդակցման և փոխգործակցության վրա:

Տեսական և փորձարարական հետազոտության ընթացքում առաջադրվել են հետևյալ **խնդիրները**.

- վերլուծել դասավանդող-ուսանող փոխներգործության, փոխհարաբերությունների, փոխգործակցության, գործընկերային մթնոլորտի ստեղծման, աջակցման տեխնոլոգիաների կիրառման բովանդակությունը, ընթացակարգերը, ձևերը, դասակարգել դասավանդողների գործառույթները:
- Նախագծել մասնագիտական կրթության համակարգում դասավանդող-ուսանող փոխներգործության մանկավարժական աջակցման մոդելը:
- Տեսականորեն հիմնավորել և փորձարարությամբ ստուգել այն մեթոդներն ու միջոցները, որոնք ապահովում են ուսումնական գործընթացում դասավանդողների և ուսանողների փոխգործակցության արդյունավետությունը:
- Մշակել «Մանկավարժի մասնագիտության հիմունքներ» հատուկ դասընթացի ծրագիր, փորձարարության ընթացքում հիմնավորել այդ դասընթացի ներդնման արդյունավետությունը դասավանդողների և ուսանողների ակտիվ փոխգործակցության համատեքստում:

Հետազոտության **մեթոդաբանական** հիմք են հանդիսացել՝

- մարդասիրական մանկավարժության հայեցակարգային գաղափարները (Շ.Ա. Ամոնաշվիլի, Ի.Ա. Զիմնյայա, Յու.Վ. Սենկո, Ե.Ն. Շիյանով, Ա.Օ. Թոփուզյան),
- անձնակենտրոն կրթության հիմնադրույթները (Վ.Պ. Բեսպալկո, Ե.Վ. Բոնդարևսկայա, Է.Ֆ. Զեեր, Վ.Վ. Սերիկով),
- ապագա ուսուցիչների մասնագիտական պատրաստությանը նվիրված տեսությունները (Յու. Ազարով, Լ.Լ. Ադոլֆ, Գ.Ի. Բատուրինա, Մ.Օ. Գրոմկովա, Մ.Մ. Լևինա),
- բուհում դասավանդող-ուսանող փոխգործակցության տարբեր տեսանկյուններին և ձևերին նվիրված հայեցակարգերը (Գ.Ն. Բրոսալինա, Գ.Ն. Դոբրինինա, Վ.Ի. Իլյիչևա, Վ.Ա. Կազարենկով, Կ. Ռոջերս, Մ. Գալբրայթ, Դ. Լևինսոն, Ն. Քոհեն),

- բարձրագույն դպրոցում կառավարման, դաստիարակչական գործընթացի տարբեր կողմերին նվիրված հետազոտությունները (Ռ. Ս.Պիոնովա, Յու.Գ. Ֆոկին, Ս.Վ. Յակովլև, Ա.Յու.Պետրով, Ն.Մ.Տալանչուկ, Լ.Թ.Ասատրյան):

Հետազոտության ընթացքում կիրառվել են տեսական և էմպիրիկ հետևյալ **մեթոդները՝**

- հետազոտության թեմային նվիրված փիլիսոփայական, հոգեբանամանկավարժական և գիտամեթոդական գրականության վերլուծություն, տվյալների համադրում, ուսումնական գործընթացի տարբեր իրավիճակների վերլուծություն,
- էմպիրիկ մեթոդներ՝ դիտում, զրույց, հարցման մեթոդներ՝ հարցազրույց, անկետավորում, թեստավորում, մանկավարժական փորձարարություն՝ հաստատող և ձևավորող փուլերով,
- փորձարարական հետազոտության արդյունքների քանակական և որակական վերլուծություն:

Հետազոտության բազա են հանդիսացել Արցախի պետական համալսարանը, Գորիսի պետական համալսարանը, ՀՀ «Սյունիք» ինստիտուտը, Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանը:

Հետազոտությունն անցկացվել է երեք փուլով.

Առաջին փուլում (2009-2010թթ.) իրականացվել է հետազոտության հիմնախնդրին նվիրված փիլիսոփայական, հոգեբանամանկավարժական և մեթոդական գրականության ուսումնասիրություն և վերլուծություն, որոշվել են հետազոտության նպատակը, օբյեկտը, առարկան, ձևակերպվել է գիտական վարկածը, առաջադրվել են տեսական և փորձարարական հետազոտության մեթոդները, ընտրվել է հետազոտության բազան, մշակվել է հատուկ դասընթացի ծրագրի նախագիծը:

Երկրորդ փուլում (2010-2011թթ.) ձևակերպվել են ուսումնական գործընթացի սուբյեկտների արդյունավետ փոխգործակցության մանկավարժական պայմանները, իրականացել է փորձարարության հաստատող փուլը, մշակվել են ստացված տվյալները, վերլուծվել է մանկավարժական բուհում դասավանդող-ուսանող փոխգործակցության պրակտիկան:

Երրորդ փուլում (2011-2012թթ.) իրականացել է փորձարարության ձևավորող փուլը, փորձաքննությամբ ստուգվել է առաջարկված մոտեցումների մանկավարժական արդյունավետությունը, մշակվել, համակարգվել, ընդհանրացվել և

իմաստավորվել են տեսական և փորձարարական հետազոտության արդյունքները, ձևակերպվել են եզրակացությունները:

Հետազոտության գիտական նորույթը.

1. Համապատասխան գրականության վերլուծության հիման վրա վերլուծվել է բուհում դասավանդողների և ուսանողների փոխգործակցության բովանդակությունը, բացահայտվել են այդ գործընթացի սոցիալ-մշակութային, մենթալ և հոգեբանամանկավարժական առանձնահատկությունները:

2. Նախագծվել է դասավանդող-ուսանող փոխգործակցության արդյունավետ իրականացման մանկավարժական աջակցման նոր մոդել՝ հաշվի առնելով ուսուցման և դաստիարակության նորագույն տեխնոլոգիաների /ֆասիլիտացիա, մենթորություն/, դասախոսների և ուսանողների մենթալ-մասնագիտական առանձնահատկությունները:

3. Առաջադրվել և հիմնավորվել են մանկավարժական այն տեխնոլոգիաները, պայմանները, որոնք ապահովում են կրթական գործընթացում դասավանդող-ուսանող փոխգործակցության արդյունավետությունն ապագա ուսուցիչների մասնագիտական պատրաստության համատեքստում:

4. Հիմնավորվել է մանկավարժական կրթության համակարգում ուսումնական աշխատանքի կազմակերպման տարբեր ձևերում դասավանդող-ուսանող փոխգործակցության տեխնոլոգիաների, մեթոդների և միջոցների կիրառման արդյունավետությունը:

Հետազոտության տեսական նշանակությունը:

1. Վերլուծվել են բարձրագույն կրթության համակարգում դասավանդողների և ուսանողների փոխգործակցության հիմնախնդրին նվիրված հոգեբանական, սոցիոլոգիական և բուն մանկավարժական հայեցակարգերը և տեսությունները:

2. Տեսականորեն հիմնավորվել են մանկավարժական բուհի կրթական գործընթացում արդյունավետ ուսուցման և դաստիարակության տեխնոլոգիաների, մեթոդների ու միջոցների կիրառման անհրաժեշտությունը՝ որպես դասավանդողների և ուսանողների փոխգործակցության արդյունավետության բարձրացման պայման:

3. Համակարգվել են ուսանողակենտրոն կրթության հարացույցում ուսումնական աշխատանքի տարբեր ձևերում ուսուցման գործընթացի սուբյեկտների փոխգործակցության վերաբերյալ տեսական դրույթները և

մոտեցումները:

4. Տեսականորեն հիմնավորվել են «Մանկավարժի մասնագիտության հիմունքներ» դասընթացի կազմակերպման սկզբունքները, հաշվի առնելով դասավանդող-ուսանող փոխգործակցության արդյունավետ իրականացման մանկավարժական պայմանները:

Հետազոտության գործնական նշանակությունը:

1. Տեսական և գործնական հետազոտության նյութերը կարող են օգտագործվել բուհում ուսումնական աշխատանքի տարբեր ձևերում դասավանդողների և ուսանողների փոխգործակցության արդյունավետ իրականացման, ուսուցման գործընթացում երկխոսական միջավայրի ձևավորման համար:

2. Տեսական և փորձարարական հետազոտության արդյունքները կարող են օգտակար լինել մանկավարժական բուհի ուսանողների մասնագիտական պատրաստությանը, նրանց իմացական և հաղորդակցական կոմպետենցիաների ձևավորմանը նվիրված գիտամեթոդական տարբեր մշակումներում:

3. Հետազոտության նյութերը կարող են կիրառվել սկսնակ ուսուցիչների հետ տարվող մեթոդամասնագիտական աշխատանքներում, ուսուցիչների պատրաստման, վերապատրաստման դասընթացներում:

Պաշտպանության են ներկայացվում հետևյալ դրույթները:

1. Բարձրագույն կրթության համակարգում իրականացող արդի բարեփոխումների համատեքստում բուհի խնդիրն է շարունակաբար զարգացնել ուսանողի մասնագիտական կոմպետենցիան, որը ներառում է ակմեոլոգիական, արժեքային, ճանաչողական-հաղորդակցական բաղադրիչները, զարգացնել քննադատական-ռեֆելեքսիվ կարողությունները, որոնք, մի կողմից, ընկած են դասավանդող-ուսանող արդյունավետ հաղորդակցման հիմքում, մյուս կողմից՝ ձևավորում են դասավանդողների և ուսանողների ակտիվ փոխգործակցության յուրահատուկ մշակույթ:

2. Դասավանդող-ուսանող փոխգործակցության կազմակերպման կարևոր պայման է նաև դասավանդողի կողմից ուսանողների ուսումնաճանաչողական և ուսումնահետազոտական գործունեության կազմակերպչի, խորհրդատուի դերի ստանձնումը, ֆասիլիտացիայի գործառույթի իրականացումը, որը պահանջում է տարբեր հաղորդակցական, ճանաչողական ռազմավարությունների, աջակցման, մենթորային տեխնոլոգիաների կիրառում, ինչպես նաև մանկավարաժական

համապատասխան ռեֆլեքսիայի մակարդակ, տարբերակված և անհատական մոտեցումների տարբեր ուսումնախոսքային իրավիճակներում կիրառում:

3. Դասավանդողների և ուսանողների փոխգործակցությունն արդյունավետ է իրականանում ուսումնական և արտաուսումնական գործունեության ընթացքում երկխոսության վրա հիմնված ձևերի, մեթոդների և միջոցների նպատակային կիրառմամբ, հետադարձ կապի ապահովմամբ, ախտորոշիչ և վերահսկողական տեխնոլոգիաների ներդրմամբ:

4. Դասավանդող-ուսանող փոխգործակցության մանկավարժական մոդելի ներդնման արդյունավետությունն ապահովվում է ուսումնական աշխատանքի տարբեր ձևերում գործունեության փոխներգործուն բնույթով, դասավանդողների մանկավարժական վարպետության և հաղորդակցման՝ ըստ իրավիճակի ճկուն ոճերի դրսևորմամբ, բուհի կառավարման համապատասխան ենթահամակարգերի կողմից հոգեբանամանկավարժական և սոցիալական աջակցության նպատակահարմար ձևերի կիրառմամբ:

Հետազոտության հավաստիությունն ու հիմնավորվածությունն ապահովվում են հոգեբանամանկավարժական գրականության մեջ առկա տեսությունների համալիր վերլուծությամբ, տեսական և փորձարարական հետազոտության արդյունքների և ելակետային դրույթների մեթոդաբանական հիմնավորվածությամբ, հետազոտության առարկային, նպատակին, խնդիրներին համարժեք ընտրված հետազոտության մեթոդների կիրառմամբ, փորձարարական հետազոտության համակարգված բնույթով, ստացված արդյունքների հանգամանալից վերլուծությամբ, արդյունքների արժանահավատությամբ և հիմնավորված եզրահանգումներով:

Հետազոտության փորձաքննությունը կատարվել է Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի մանկավարժության տեսության և պատմության ամբիոնում, հետազոտության բազա հանդիսացած ուսումնական հաստատություններում, ատենախոսության հիմնադրույթներն արտացոլող հրատարակված գիտական հոդվածներում:

Ատենախոսության կառուցվածքը և ծավալը: Ատենախոսությունը կազմում է 167 համակարգչային էջ՝ բաղկացած ներածությունից, երեք գլխից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածներից:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածության մեջ հիմնավորվել է հիմնախնդրի արդիականությունը, բացահայտվել է նրա մշակվածության աստիճանը, որոշվել են հետազոտության նպատակը, օբյեկտը, առարկան, խնդիրները, ձևակերպվել է աշխատանքային վարկածը: Ներկայացվել են հետազոտության մեթոդաբանական աղբյուրները, նորույթը, տեսական և գործնական նշանակությունը, պաշտպանության ներկայացվող դրույթները, ատենախոսության փորձաքննությունն ու կառուցվածքը:

Ատենախոսության՝ «Դասավանդողների և ուսանողների փոխգործակցության գիտատեսական հիմնավորումը» խորագիրը կրող առաջին գլուխը բաղկացած է երեք ենթագլխից:

Առաջին ենթագլխում՝ «Դասավանդողների և ուսանողների փոխգործակցության փիլիսոփայական և սոցիալ-հոգեբանական հիմքերը» մեկնաբանված է սոցիալական փոխգործակցության, միջանձնային փոխգործակցության հասկացությունների էությունը:

Նշվում է, որ փոխգործակցության նպատակն այդ գործընթացի բոլոր մասնակիցների անձնային և մասնագիտական զարգացումն է: Ինչպես և ցանկացած նպատակաուղղված գործընթաց, ուսանողների և դասավանդողների փոխգործակցությունը պետք է ունենա գնահատման չափանիշներ և համապատասխան մեթոդներ:

Բնութագրված են դասավանդողների և ուսանողների արդյունավետ փոխգործակցության կազմակերպման վերլուծական-ռեֆլեքսիվ, կառուցողական-կարգավորող, ստուգողական-շտկողական փուլերը:

Երկրորդ՝ «Մանկավարժական հաղորդակցման դերը դասավանդող-ուսանող փոխգործակցության գործընթացում» ենթագլխում դիտարկված և վերլուծված են մանկավարժական հաղորդակցման առանձնահատկությունները:

Շեշտադրվում է ոչ թե միջդերային, այլ միջանձնային հաղորդակցումը, առ այն, որ հաղորդակցման մասնակիցների միջև առաջնային են դառնում երկխոսությունը, փոխըմբռնումը, բացախոսությունն ու համաստեղծագործությունը:

Դիտարկված են մանկավարժական հաղորդակցման փուլերը, ներկայացված

են բարձրագույն դպրոցում դասավանդող-ուսանող հաղորդակցմանը ներկայացվող պահանջները:

Երրորդ ենթագլխում՝ «Դասավանդողների և ուսանողների փոխգործակցության զարգացման միտումները բարձրագույն կրթության արդի բարեփոխումների համատեքստում» բնութագրվել են բարձրագույն դպրոցի խնդիրները: Նշվում է, որ մասնագիտական կրթության հիմնախնդիրների լուծումն անհնար է առանց մանկավարժական նոր մտածողության, ուսումնադաստիարակչական նոր տեխնոլոգիաների մշակման ու ներդրման:

Բնութագրված են բազմամակարդակ կրթության պայմաններում մասնագիտական պատրաստության արդյունավետ իրականացման գերակա ուղղությունները:

Կարևորվում են ուսանողների սոցիալական կայուն դիրքորոշումների ձևավորումը, դասավանդող-ուսանող կամ սուբյեկտ-սուբյեկտ փոխգործակցության այնպիսի ձևերի ընտրությունը, որոնք ուսանողներին հնարավորություն են տալիս ձեռք բերել ընդհանուր և մասնագիտական գիտելիքներ և կարողություններ, ինքնուրույն աշխատանքի, ինքնազարգացման և ինքնաիրացման հմտություններ:

Ատենախոսության՝ «Դասավանդողների և ուսանողների փոխգործակցությունը որպես սոցիալ-մանկավարժական հիմնախնդիր» խորագիրը կրող երկրորդ գլուխը բաղկացած է երեք ենթագլխից:

Առաջին «Դասավանդող-ուսանող փոխգործակցության մանկավարժական մոդելը» ենթագլխում բնութագրված է մանկավարժական բուհում դասավանդող-ուսանող փոխգործակցության արդյունավետ իրականացման համար մեր կողմից նախագծված մանկավարժական աջակցման մոդելը՝ հաշվի առնելով ուսուցման և դաստիարակության նորագույն տեխնոլոգիաների /ֆասիլիտացիա, մենթորություն/, դասախոսների և ուսանողների մենթալ-մասնագիտական առանձնահատկությունները:

Երկրորդ՝ «Մանկավարժական աջակցության տեխնոլոգիաները՝ որպես դասավանդողների և ուսանողների փոխգործակցության արդյունավետության բարձրացման գործընթաց» ենթագլխում բնութագրված են բուհում ուսումնական գործընթացի կազմակերպման հիմնական ձևերը: Նշվում է, որ ուսուցման կրեդիտային համակարգին անցնելու պայմաններում ուսուցման

ավանդական ձևերին զուգահեռ լայնորեն կիրառվում են ոչ ավանդական ձևեր՝ բանավեճեր, թրենինգներ, անհատական և թիմային ուսումնահետազոտական նախագծեր, դերային ու գործնական խաղեր:

Առանձնահատուկ կարևորվում է ուսանողների ինքնուրույն աշխատանքը, որը ևս պահանջում է դասավանդող-ուսանող ակտիվ փոխներգործություն:

Հիմնավորվում է ֆասիլիտացիա տեխնոլոգիայի կիրառման անհրաժեշտությունը և արդյունավետությունը: Ներկայացված է մենթորության բովանդակությունը, որը դիտվում է որպես ուսումնառության խթանման միջոց, մանկավարժական գործիք, անհատական, դեմ առ դեմ դասավանդման և ուսուցման մեթոդ, որը բնութագրվում է որպես ավագ և ավելի փորձառու անձի օգնության ցուցաբերում կրտսերի կամ քիչ փորձառուի հանդեպ:

Երրորդ՝ «Դասավանդող-ուսանող փոխգործակցության բովանդակությունը և արդյունավետության մանկավարժական պայմանները մասնագիտական պատրաստության գործընթացում» ենթագլխում բացահայտված են ուսանողների ընդհանուր մանկավարժական պատրաստության գործընթացի օրինաչափությունները և մանկավարժական կրթության զարգացման արդի միտումները:

Վերլուծված են մանկավարժական բուհում ապագա ուսուցչի ընդհանուր մասնագիտական պատրաստության արդյունավետ իրականացման մանկավարժական պայմանները:

Ատենախոսության՝ «Դասավանդողների և ուսանողների փոխգործակցության գործընթացի արդյունավետության մեթոդական ապահովումը բարձրագույն կրթության համակարգում» խորագիրը կրող երրորդ գլուխը բաղկացած է երեք ենթագլխից:

Առաջին՝ «Մանկավարժական բուհում դասավանդող-ուսանող փոխգործակցության առկա փորձի վերլուծությունը» ենթագլխում ներկայացված է հետազոտության ընթացքում մեր կողմից մշակված ախտորոշիչ ծրագիրը: Ծրագիրը կիրառվել է փորձարարական հետազոտության ընթացքում փորձարարության բազա հանդիսացած ուսումնական հաստատություններում:

Առաջադրված ծրագրից բխող խնդիրներն իրականացել են անկետավորման, դասավանդող-ուսանող փոխգործակցության տարբեր իրավիճակներում դիտումների, զրույցի, թեստավորման, շարադրության, էսսեների և այլ

մեթոդների կիրառմամբ: Մեթոդների ընտրությունը պայմանավորված է եղել հետազոտության նպատակներով, դրանց համարժեքությամբ:

Ներկայացված են փորձարարական հետազոտության հաստատող փուլում ուսանողներին առաջարկված հարցաթերթիկները, որոնց վերլուծության տվյալները ցույց են տալիս, որ բուհի ուսումնադաստիարակչական գործընթացը բնութագրվում է դասավանդողների և ուսանողների փոխգործակցության բնույթի նորացման անհրաժեշտությամբ, որում առաջնային են դասավանդողի աջակցող գործառույթը, կրթական արդյունավետ միջավայրը, ուսումնական գործընթացի կազմակերպման ոչ ավանդական ձևերը և այլն:

Ընդհանրացնելով մանկավարժական փորձարարության տվյալները՝ սահմանվել են դասավանդող-ուսանող փոխգործակցության արդյունավետ իրականացման բարձր, միջին և ցածր մակարդակները:

Երկրորդ՝ «Մանկավարժի մասնագիտության հիմունքներ» հատուկ դասընթացի ծրագրային ապահովումը և բովանդակության կառուցման սկզբունքները» ենթագլխում ներկայացվում են «Մանկավարժի մասնագիտության հիմունքներ» դասընթացի նպատակը, հիմնական գործառույթները, բաղադրիչները, բացահայտվում են դասավանդողի հաղորդակցային ոճերի և մշակույթի առանձնահատկությունները: Նշվում է, որ ներկայացվող դասընթացը ներածական բնույթ ունի և կողմնորոշված է ոչ միայն ուսանողների մասնագիտամանկավարժական հիմնական պատկերացումների ձևավորմանը, այլև ուսումնահիմացական ինքնուրույն գործունեության մեջ նրանց ներգրավմանը:

Երրորդ ենթագլխում՝ «Դասավանդողների և ուսանողների փոխգործակցության արդյունավետ իրականացման միջոցների և ձևերի փորձարարական հիմնավորումը» ներկայացված են մանկավարժական փորձարարության արդյունքները:

Փորձարարության ընթացքում բացահայտել է ներկայացվող դասընթացի, կրթական աջակցող միջավայրի հնարավորությունները՝ դասավանդողների և ուսանողների արդյունավետ փոխգործակցության կազմակերպման համատեքստում:

Ներկայացվել են մշակված դասախոսությունների, սեմինար և գործնական պարապմունքների անցկացման, ուսանողների ինքնուրույն աշխատանքների,

ուսումնահետազոտական նախագծերի իրականացման նմուշ-օրինակները:

Փորձարարական հետազոտության եզրափակիչ փուլում անցկացվել են զրույցներ և հարցումներ, որի արդյունքում ամփոփվել են դասընթացի ուսումնասիրման արդյունքները, հիմնավորել է դասախոս-ուսանող փոխգործակցության մոդելի արդյունավետությունը:

Այդ նպատակով ուսանողներին առաջարկվել է լրացնել ուսումնամասնագիտական կարողությունների գնահատման թերթիկ: Հարցման արդյունքները համեմատական կտրվածքով արտացոլված են աղյուսակում և համապատասխան տրամագրում:

Աղյուսակ 1

Դասավանդող-ուսանող փոխգործակցության մակարդակների համեմատությունը փորձարարության սկզբում և վերջում (%)

Մակարդակներ	Ստուգիչ խմբեր			Փորձնական խմբեր		
	փորձար. սկիզբ	փորձար. վերջ	տարբ.	փորձար. սկիզբ	փորձար. վերջ	տարբ.
Բարձր	17	21	+4	19	51	+32
Միջին	44	45	+1	41	39	-2
Ցածր	39	34	-5	40	10	-30



Տրամագիր 1. Դասավանդող-ուսանող փոխգործակցության մակարդակների համեմատությունը փորձարարության սկզբում և վերջում (%)

Փորձարարական հետազոտության ամփոփիչ տվյալները հաստատում են հետազոտության գիտական վարկածը, առ այն, որ մանկավարժական բուհում դասավանդող-ուսանող փոխգործակցության արդյունավետությունը պայմանավորված է մանկավարժական գործընթացի սուբյեկտների հաղորդակցման դրական հուզազգայական մթնոլորտի ապահովմամբ, ուսանողների ակտիվության, ինքնուրույնության խթանմամբ, այնպիսի նոր դասընթացների ներմուծմամբ, որոնք հիմնված են ուսանողների մասնագիտական պատրաստության նկատմամբ արդի մոտեցումների ու սկզբունքների վրա և բխում են անձնակենտրոն կրթության արդի հայեցակարգերից:

Հետազոտությամբ ստացած արդյունքները հավաստեցին առաջարկված գիտական վարկածի ճշմարտացիությունը՝ թույլ տալով ձևակերպել հետևյալ **եզրակացությունները**.

1. Մանկավարժական տարբեր հարացույցներում խնդիր է դրվել բացահայտել դասախոս-ուսանող փոխազդեցության, փոխհարաբերությունների դինամիկան, ուղղվածությունը, բովանդակությունը, գործառույթները: Հումանիստական մանկավարժության շրջանակներում առաջին պլան է մղվում «փոխգործակցություն» եզրույթը: Այն համապատասխանում է հումանիստական-կառուցողական մանկավարժության զարգացման միտումներին և տրամաբանությանը:

2. Մանկավարժական տեսության և մեթոդաբանության զարգացման միտումները բացահայտելով՝ հնարավոր է դառնում վերլուծել դասախոս-ուսանող փոխգործակցության բովանդակությունը, որում առանցքային դեր են խաղում ապագա ուսուցիչների անձնային և մասնագիտական որակները:

3. Մանկավարժական բուհում դասավանդողների և ուսանողների փոխգործակցությունն ենթադրում է ուսուցման և ուսումնառության նոր մակարդակ՝ հիմնված փոխըմբռնման, խորհրդատվության, ուղղորդման, աջակցման, դրական հուզական դաշտ ստեղծելու, հաղորդակցման և դասավանդման նորագույն տեխնոլոգիաների կիրառման վրա:

4. Դասավանդող-ուսանող փոխգործակցությունը մանկավարժական հաղորդակցման յուրահատուկ դրսևորում է և մանկավարժական հաղորդակցման որակապես նոր մակարդակ է ենթադրում, որում առաջնային են ուսանողների ինքնաճանաչման և ինքնորոշման, ինքնագնահատման կարողությունները, ուսումնական տարբեր իրադրություններում դրանց

կիրառելու ռազմավարությունները և տեխնոլոգիաները:

5. Մանկավարժական բուհում դասավանդող-ուսանող փոխգործակցության արդյունավետության մանկավարժական պայմանները ներկայացնելիս, առանձնանում են ուսումնական աշխատանքի այն ընթացակարգերը և ձևերը, որոնք ենթադրում են երկխոսական, բազմախոսական, բացախոսական կարողությունների, ընդհանուր առմամբ՝ կրթական ինտերակտիվ միջավայրի ձևավորում, լսարանային ու արտալսարանային ակտիվ շփումների ապահովում՝ հիմնված համագործակցության, հանդուրժողականության, փոխըմբռնման և հաղորդակցման բարձր մշակույթի վրա:

6. Դասավանդող-ուսանող փոխգործակցության արդյունավետ իրականացման մանկավարժական մոդելը ներառում է փոխգործակցության մեթոդաբանական հիմքը կազմող տեսություններն ու հայեցակարգերը, այդ գործընթացի բովանդակությունը, արդյունավետ իրականացման մանկավարժական պայմանները, դասավանդող-ուսանող փոխգործակցության ախտորոշումը՝ հաջորդական փուլերով, փոխգործակցության մակարդակներն ու դրանց բնութագրիչները, փոխգործակցության ձևերը, այդ գործընթացում մանկավարժական համագործակցության տեխնոլոգիաները, մեթոդները ու հնարները:

7. Բուհում դասավանդող-ուսանող փոխգործակցությունն արդյունավետ է իրականանում կրթական աջակցող միջավայրում՝ հաշվի առնելով ուսանողների ուսումնամասնագիտական դրդապատճառները, պահանջմունքները, ձգտումները:

8. Մասնագիտական պատրաստության գործընթացի կատարելագործմանն ուղղված հատուկ դասընթացների ուսումնասիրումը՝ հիմնված փոխգործակցության, հաղորդակցման, գործնական իրավիճակների ստեղծման ու վերլուծության վրա, նպաստում է ապագա մասնագիտության տեսական և գործնական հիմունքներին տիրապետմանը:

Ատենախոսության հիմնական բովանդակությունն արտացոլված է հեղինակի հրատարակած հետևյալ գիտական հոդվածներում.

1. Օհանյան Լ. Ս. Դասավանդողների և ուսանողների փոխազդեցության զարգացման միտումները բարձրագույն կրթության արդի բարեփոխումների համատեքստում //Կրթությունը և գիտությունը Արցախում, հանդես, թիվ 3-4,

2011, էջ 35-41:

2. Օհանյան Լ.Ս. Դասավանդող-ուսանող փոխազդեցության բովանդակությունն ապագա ուսուցիչների մասնագիտական պատրաստության գործընթացում //Մանկավարժություն գիտամեթոդական հանդես, թիվ 1, 2012, էջ 35-42:

3. Օհանյան Լ.Ս. Մանկավարժական հաղորդակցման դերը դասավանդող-ուսանող փոխազդեցության գործընթացում // «Մխիթար Գոշ» գիտամեթոդական հանդես, թիվ 4-6, 2012, էջ 84-88:

4. Օհանյան Լ.Ս., Դասավանդողների և ուսանողների փոխազդեցության բնույթը և առանձնահատկությունները ուսումնական գործընթացի կազմակերպման տարբեր ձևերում // Մանկավարժական միտք, 2012, թիվ 1-2, էջ 65-71:

5. Օհանյան Լ.Ս. Դասավանդողների հոգեբանամանկավարժական ներգործության առանձնահատկությունները ուսանողների հետ փոխգործակցության ընթացքում // Մանկավարժական միտք, 2015, թիվ 3, էջ 64-68:

ОГАНЯН ЛИАНА САШИКОВНА
ПРОБЛЕМА СОВЕРШЕНСТВОВАНИЯ ВЗАИМОДЕЙСТВИЯ ПРЕПОДАВАТЕЛЕЙ И СТУДЕНТОВ

Диссертация на соискание ученой степени кандидата педагогических наук по специальности 13. 00.01-“Теория и история педагогики”.

Защита диссертации состоится 20-го ноября, 2015г., в 14^{00} часов на заседании специализированного совета 065 ВАК по присуждению ученых степеней при Ереванском государственном университете, адрес: 0025, г. Ереван, ул. Х. Абовяна 52 а. ЕГУ, факультет армянской филологии, 203 аудитория.

РЕЗЮМЕ

Актуальность исследования. Актуальность исследования обусловлена современными тенденциями развития высшего профессионального образования, современными требованиями, предъявляемыми обществом к коммуникативным качествам личности, а также процессами, способствующими к межкультурному диалогу.

Соответствующий анализ показал, что до сих пор основательно не исследованы психолого-педагогические предпосылки, факторы, педагогические условия, особенности формирования эффективнойинтеракции преподавателей и студентов в образовательном процессе педагогического вуза.

Цель исследования: теоретически обосновать и практически применить модель педагогической поддержки преподавателей и студентов в педагогическом вузе.

Задачи исследования:

- Проанализировать содержание, формы применения технологий педагогической поддержки взаимодействия, создания партнерской атмосферы в процессе взаимодействия, взаимоотношений и интеракции преподавателей и студентов в педагогическом вузе, классифицировать функции предподавателей.
- Спроектировать модель педагогической поддержки интеракции преподавателей и студентов.
- Обосновать теоретически и экспериментально обосновать те методы и средства, которые обеспечивают в учебном процессе продуктивность интеракции преподавателей и студентов.
- Разработать программу курса “Основы профессиональной деятельности

педагога", экспериментально обосновать эффективность внедрения этого курса в контексте активного взаимодействия преподавателей и студентов.

Научная новизна исследования:

- Проанализировано содержание взаимодействия преподавателей и студентов в вузе, выявлены социально-педагогические, ментальные и психолого-педагогические ососбенности этого процесса.
- Спроектирована модель педагогической поддержки интеракции преподавателей и студентов, с учетом особенностей применения новейших педагогических технологий (фасилитация, менторство).
- Предсатвлены и обоснованы педагогические технологии, условия, обеспечивающие эффективность взаимного влияния преподавателя и студента в контексте профессиональной подготовки будущих учителей.
- Обоснована эффективность применения технологий, методов и средств интеракции преподавателя и студента в разных формах организации учебной деятельности в вузе.

Теоретическая значимость. Проанализированы психологические, социологические и собственно педагогические концепции и теории по проблемам обеспечения интеракции преподавателей и студентов, обоснована необходимость применения технологий, методов и средств обучения и воспитания как условие повышения эффективности преподавателей и студентов, а также принципы организации курса "Основы профессиональной деятельности педагога", с учетом педагогических условий эффективного осуществления интеракции преподавателя и студента.

Практическая значимость исследования состоит в том, что основные положения диссертации могут быть применены как в учебном процессе, так и в переподготовке и повышении квалификации преподавателей, в разработке специализированных курсов по подготовке учителей. Предоставленные материалы теоретического и эмпирического исследования могут быть использованы для создания интерактивной среды в процессе обучения и эффективного осуществления интеракций преподавателей и студентов в различных формах учебной работы в вузе.

Структура диссертации. Диссертационная работа изложена на 167 страницах компьютерного текста, состоит из введения, трех глав, заключения, списка использованной литературы, приложений.

OHANYAN LIANA SASHIK

THE PROBLEM OF IMPROVEMENT OF THE INTERACTION BETWEEN TEACHERS AND STUDENTS

Thesis for degree of candidate of pedagogical sciences, specialty 13.00.01 "Theory and history of Pedagogy''.

The defense of the dissertation will be held on the 20th of november, 2015 at $14^{\underline{00}}$ at the session of the Special Board of Pedagogy 065 HAC (Higher Attestation Commission) on awarding degrees under the YSU, address: st. Kh. Abovyan 52 a. YSU, Deparment of Armenian Philology, room 203.

Summary

The relevance of the research: The current tendencies for the development of professional education and the communicative qualities required by the society as well as the enhancement of cross-cultural dialogues were theimportant factor behind the relevance of the chosen topic. Our theoretical investigations have revealed that the prerequisites, the psychopedagogical factors and the peculiarities of the teaching\learning process for the promotion of effective interaction between the teachers and the learners at pedagogical establishments have not been thoroughly researched.

The Aim of the research is to justify theoretically and practically the effectuivenes of the model of pedagogical support to teachers and students in pedagogical higher school.

The Objectives of the research:

1. To analyze the content of the pedagogical model of applying facilitating technologies to cooperate and createpositive emotional atmosphere, to classify the functions of teachers.

2. To design a pedagogical facilitating model to support teacher- student interaction.

3. To justify theoretically and experimentally the effectivnes of the methods and means to provide in the educational process the efficiency of teacher-student interaction.

4. To develop a course program "The Basics of Teacher's Professional Work", to prove experimentally the effectiveness of the implementation of this courseprogram in the context of active interaction between teachers and students.

The scientific novelty of the research:

1. It analyzes the content of teachers-studentinteraction in higher school, taking into consideration the mental, psychological and pedagogical aspects of the educational process.

2. It designs the model of pedagogical support to teacher-student interaction to use new educational technologies (facilitation, mentoring).

3. It presents and and justifies the effectiveness of pedagogical technologies to improve the conditions of teacher-student interaction in the context of professional training of future teachers.

4. It proves the efficiency of applying new pedagogical technologies, methods and means of teacher-student interaction in various forms of educational activity in higher school.

The theoretical value of the research: It analyzes the psychological, sociological and pedagogical proper concepts and theories on ensuring teacher-student interaction, substantiates the necessity of applying new technologies, justifies the principles of organizing the developed course, taking into account the effective of the implementation of the conditions of pedagogical teacher- student interaction.

The practical value of the research: The materials of the theoretical and empirical studies as well as the developed program of "The Basics of Teacher's Professional Work"can be used in facilitating a dialogue during the teaching/learning process. Additionally, they can be utilized to create an supporting environment for effective interaction between teachers and students in various settings of academic studies at the university.

The structure of dissertation: The current work consists of 167 pages and consists of an introduction, three chapters, conclusions, a list of references and appendices.